Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 228 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի աղբահանության բարելավմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Շվեդիայի թագավորության կառավարություն, ի դեմս՝ Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Swedish International Development Cooperation Agency (Sida), փոստային հասցե՝ Box 2025, 74 02 Sundbyberg, այցելուներ՝ Rissneleden 110):
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 01511187)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ընագավառը՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	500,000 եվրոյին համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարան (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, քաղ. Սևան, Նաիրյան փողոց, 164 շենք)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 15-ից մինչև 2025 թվականի մարտի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Սևանի համայնքապետարանի և «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի միջև կնքվելիք փոխըմբռնման հուշագրի համաձայն, նախատեսվում է Սևանի համայնքապետարանին տրամադրել աջակցություն Սևան քաղաքում թափոնների տեսակավորման համակարգի ներդրման նպատակով՝ 1) աղբամանների ձեռքբերում կամ ներմուծում և նվիրաբերում Սևանի համայնքապետարանին՝ 250,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ. 2) աղբատար մեքենայի ձեռքբերում կամ ներմուծում և նվիրաբերում Սևանի համայնքապետարանին՝ 230,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ. 3) աղբամանների տեղադրման և աղբատար մեքենայի մեկնարկման աշխատանքների, շահագործող անձնակազմի վերապատրաստման հետ կապված ծախսեր՝ 20,000 եվրոյին համարժեք դրամ: 2. Միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև 2025 թվականի մարտի 1–ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Աղբամանների ձեռքբերում կամ ներմուծում՝ 250,000 եվրոյին համարժեք դրամ: 2. Աղբատար մեքենայի ձեռքբերում կամ ներմուծում՝ 230,000 եվրոյին համարժեք դրամ: 3. Աղբամանների տեղադրման և աղբատար մեքենայի մեկնարկման աշխատանքներ, շահագործող անձնակազմի վերապատրաստում՝ 20,000 եվրոյին համարժեք դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն է իրականացվելու Ծրագրի ղեկավար խորհրդի կողմից՝ հաշվետվությունների տեսքով: 2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերի բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ